

ՅԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏԾՆՅ

ՅՈՒՅԵԼԵԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԿԱՆՔ

Զատկական տօներին թիգլիդում դանելով, ներկայ հղայ ապրիլի 22-ին այսպէս ասած՝ հաշտութեան ժողովին ու լսեցի երկու կողմերի համ իրաւասութեան վերաբերեալ առարկութիւնները՝ ժողովականներից մէկը, թիգլիդու բոլոր հասարակութիւնների ներկայացուցիչների իրաւասութիւնն անրաւարար համարելով, ասաց՝ ուր են թեմի ներկայացուցիչները, պէտք է լսել նրանց ձայները։ Այս հարցն յարուցանողին պատասխանեցին, քանի որ պարտականութիւնն և ոչ թէ իրաւունքներ են վերապահում ընտրուող Յանձնաժողովին, թեմի ձայնից անկախ կարելի է ընտրութիւն կայացնել ևս, այդտեղ նստած լինելով, թէն կարող էի թեմի զժգուհութեան, զարմանքի ձայնը լսելի գարձնել, սակայն լսեցի, իրքի պաշտօնական անձնաւորութիւնն այդ հաշտութեան ժողովում մարդկանց չզգուիլու համար։

Հետեւեալ օրը վերսկսեցի իմ շրջագայութիւնը և երբեմն գիւղական այս անշիւնում պատահմամբ «Եղակ», միւսում «Հորիզոն» կարգալով տեղեկացաց, որ այդ հաշտութիւնը իսկապէս մնամէջ է եղել, որ զործը գարձնեալ մնում է նայն ցաւալի կացութեան մէջ, որ այս ներական ձեռնարկութիւնն անզամ անկարող է մարգկանց զէթ մի քանի ամսով միացնել։

Այս տիսուր լուրերը, անհաշտութեան արձագանքները գալիս համուում էին ինձ Ախալքալաքի շրջանում, այդ դաժան երկրի յուսահատական իրականութեան մէջ։ Մութ, ցուրտ, խոնաւ «դասարաններում» ծանր տրամադրութեան մէջ պարագում ու պարագեցնում ենք զեղուկ մանուկներին, որնք յուսով ու հաւատով ուսումնա-

րան են եկել «լու մարդ» դառնալու բնազգով։ Լաւ մարդ, բայց թնդապէս այդ խեղճուկները նպաստակի հաւանան այդ դժողովի մէջ, որին մի տարուց աւելի չեն զիմանում ուսուցիչները և շարունակ փափոխում են մէկի անփորձութեանը միւսինը տեղի տարով։ Ի՞նչ ասես ու խօսես այդ իրականութեան բարեփոխութեան մասնի, նրանց յուսանատ ձնողների հետ, որոնց անցած տարւայ աշնան վերահաս վատ եղանակների պատճառով չկալսած կտումը զէզ-զէզ մնացել է, իսկ այս տարի դեռ չեն կարողացել ցանք աներ արածն էլ սարսափելի ցրտերի զոհ դարձաւ։

Մեր թեմում տեղ-տեղ ձեռնարկում են ներկայացումների յօդուտ զպրոցական ֆօնդի, չնայելով կենդրոնի ցաւալի վերաբերմունքին, ուր տակաւին միայն վիճում ու զրում են, առանց զէպի զործը մի բայլ անելու։ Այս պատճառով ինձ առանձին ուրախութիւն պատճառից գաւառուն զործիներից մէկի մասնաւոր նամակը զպրոցական ֆօնդի մասին ինձ ուղղած, որ մի քանի անպանոյն տողերին կուգէի հաղորդակից անել սակ ընթերցողին։ Թղթակիցս մեր թեմի սակաւաթիւ եռանդուն զործակալ բահանաներից մէկն է, որին ոգեսրութիւնը, առանց կողմանակի ցուցմունքների, թելազրել է ինքնարերաբար ներեւում բացատրած ցանկալի եղանակով կազմակերպել հանդանակութեան գործը նա ի միջի այլոց զրում է։ «Դպրոցական ֆօնդի համար իմ զործակից բահանաների հետ գործն այնպէս իմ կարգազրել, որ ամեն մի հոգուց, առանց սեսի ու հասակի խըստութեան, շատ թէ քիչ, մինչև անզամ կոտկներ, ժողովում ու ժողովել եմ տալիս և այսուհետե կամաց-կամաց

իլ սկսեմ պրամներ փոխադրել։ Բայց
այսօր զիւղերից յոզնած քաղաք դա-
լով, կարգացի Զեր Տփխիսի լրա-
գրները ժողովների մասին և շատ ցա-
ւացի, որ այսպիսի բարձր ու անդին
գործի համար էլ զանուռմ են մարդիկ,
և յայտնի հասկացողներ, որ ի չարն
են աշխատում...» (բաղմակէտը նա-
մակագրինն է):

Ի՞նչ զրել, ինչ ով խրախուսել այս-
պիսի համնատ գործիչներին, որոնց
բուռն ոգեորութեան ճանապարհին
հիասթափութիւնն է հանգիստում։ Մի
յուսահատուիք, զուք զաւառական ըն-
տիր գործիչներ, շարունակեցէք յօ-
զուտ զալրոցի ու զրականութեան
գործել կենդրոնից անկախ, ձեր
բնական աղնիւ հակումներին հե-
տեւով։ Կենդրոնը բանած է,

ասեմ, անբուժելի ցաւով, որ
նրան թոյլ չէ տալիս մոռանալ
մանր հաշխաները նաև մեծ, նւիրական,
վեհ գործի հանդէպ։ Գործեցէք ձեր ա-
ռողջ, զատողութեամբ ու զզացմուն-
քով, զուցէ կենդրոնախոյս այդ հա-
մակրելի հոսանքը թարմ հովեր առա-
ջացնէ կենդրոնում, զատապարտելի
ձգտումներով տոգորւածներին վեր-
ջապէս սթափեցնելով։

Այսպէս է բնական օրէնքը. հա-
սարակական օրգանիզմի ուժասպառ
տարրի տեղ բռնում են թարմ կեն-
սունակ նոր տարրերը։ Այս ձեռնար-
կութեան մէջ այս անզամիս կենդրո-
նական գործիչները օրինակ առնէին
զաւառական գործիչներից։

Յ. Տէր Միրաքեան